ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ5/0244/05/17
Նախագահող դատավոր՝ Էդ.Նահապետյան

Վարչական գործ թիվ ՎԴ5/0244/05/17

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«13» օգոստոսի 2018թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), հետևյալ կազմով՝

նախագահող դատավոր՝ Արա Բաբայան
դատավոր՝ Արթուր Պողոսյան
դատավոր՝ Արման Թովմասյան

քննարկելով ըստ հայցի Մուշեղ Տելիկի Գալստյանի և Դիանա Մուշեղի Գալստյանի ընդդեմ Շիրակի մարզպետարանի՝ Շիրակի մարզպետարանին ՀՀ Շիրակի մարզպետի 10.05.2004 թվականի Ֆենյա Աղասու Գալստյանին և նրա ընտանիքի անդամներին բնակարան հատկացնելու վերաբերյալ թիվ 93 որոշման բնօրինակը կամ պատշաճ վավերացված որոշման քաղվածքը՝ սխալ լրացված անունների ուղղումով տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին թիվ ՎԴ5/0244/05/17 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 19.03.2018թ. վճռի դեմ պատասխանող Շիրակի մարզպետարանի կողմից բերված վերաքննիչ բողոքով հարուցված վերաքննիչ վարույթը կարճելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Էդ.Նահապետյան) թիվ ՎԴ5/0244/05/17 վարչական գործով 19.03.2018թ. կայացրած վճռով հայցը բավարարել է:

Թիվ ՎԴ5/0244/05/17 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 19.03.2018թ. վճռի դեմ պատասխանող Շիրակի մարզպետարանի կողմից բերվել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանը 21.05.2018թ. որոշմամբ բերված վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարան 09.07.2018թ. Մ-4834 մուտքի հանարով մուտքագրվել է ՀՀ Շիրակի մարզպետ Կ.Սարուխանյանի դիմումը, որով վերջինս, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, խնդրել է

հետ վերադարձնել ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից թիվ ՎԴ5/0244/05/17 վարչական գործով բերված վերաքննիչ բողոքը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարան բողոք բերելուց հետո մինչև վերաքննիչ դատարանում գործի դատաքննության ավարտը վերաքննիչ բողոք բերած անձն իրավունք ունի ներկայացնելու դիմում բողոքը հետ վերցնելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե բողոք բերած անձը բողոքը հետ վերցնելու մասին դիմումը ներկայացրել է վերաքննիչ դատարանի կողմից բողոքը քննության ընդունվելուց հետո, ապա վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում վերաքննիչ վարույթը կարճելու մասին, բացառությամբ նույն օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված այն գործերի, որոնց քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից: Եթե դատական ակտը բողոքարկել են նաև այլ անձինք, ապա վարույթը կարճվում է միայն տվյալ բողոքի մասով:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ մասնավորապես այն, որ թիվ ՎԴ5/0244/05/17 վարչական գործով Դատարանի 19.03.2018թ. վճռի դեմ բողոք բերած անձը՝ պատասխանող Շիրակի մարզպետարանը, մինչև Վերաքննիչ դատարանում գործի դատաքննության ավարտը, դիմում է ներկայացրել բողոքը հետ վերցնելու մասին, ինչը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հիմք է վերաքննիչ վարույթը կարճելու համար, Վերաքննիչ դատարանը, փաստելով նաև, որ սույն գործը չի հանդիսանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված գործ, գտնում է, որ թիվ ՎԴ5/0244/05/17 վարչական գործով Դատարանի 19.03.2018թ. վճռի դեմ պատասխանող Շիրակի մարզպետարանի կողմից բերված բողոքով վերաքննիչ վարույթը պետք է կարճել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդված 5-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 139-րդ հոդվածին համապատասխան՝ վերաքննիչ վարույթը կարճելու մասին վերաքննիչ դատարանի որոշման կայացման պահից վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ, եթե լրացել է այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետը, և դատական ակտը չեն բողոքարկել այլ անձինք:

Տվյալ դեպքում թիվ ՎԴ5/0244/05/17 վարչական գործով Դատարանի 19.03.2018թ. վճռի դեմ բողոք բերելու համար սահմանված դատավարական ժամկետը լրացել է, և նշված դատական ակտի դեմ, բացի պատասխանող Շիրակի մարզպետարանից, այլ անձանց կողմից բողոք չի բերվել:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, միաժամանակ փաստելով, որ բերված բողոքով վերաքննիչ վարույթը կարճելու դեպքում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանն իրավասու է անդրադառնալ բացառապես բերված բողոքով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում գործի քննության հետ կապված կողմերի միջև դատական ծախսերի բաշխման հարցին, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածը՝ Վերաքննիչ դատարանը գտավ, որ Վերաքննիչ դատարանում գործի քննության հետ կապված՝ կողմերի միջև դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 139-րդ, 146-րդ, 148-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Ըստ հայցի Մուշեղ Տելիկի Գալստյանի և Դիանա Մուշեղի Գալստյանի ընդդեմ Շիրակի մարզպետարանի՝ Շիրակի մարզպետարանին ՀՀ Շիրակի մարզպետի 10.05.2004 թվականի Ֆենյա Աղասու Գալստյանին և նրա ընտանիքի անդամներին բնակարան հատկացնելու վերաբերյալ թիվ 93 որոշման բնօրինակը կամ պատշաճ վավերացված որոշման քաղվածքը՝ սխալ լրացված անունների ուղղումով տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին թիվ ՎԴ5/0244/05/17 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 19.03.2018թ. վճռի դեմ պատասխանող Շիրակի մարզպետարանի կողմից բերված բողոքով վերաքննիչ վարույթը կարճել:

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանում գործի քննության հետ կապված՝ կողմերի միջև դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

Սույն որոշման կայացման պահից թիվ ՎԴ5/0244/05/17 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 19.03.2018 թվականի վճիռը մտնում է օրինական ուժի մեջ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ
Ա.ԲԱԲԱՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
Ա.ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲՆԻՉ
ԴԱՏԱՐԱՆ

ք. ԵՐԵՎԱՆ 0014
ԲԱՇԻՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 3/9

RR
RR259247013AM

Քիրակի Նոյեմ
Վ-Ձորագետ,
Ջերմուկի (6)
Քիրակի
Կարապետյանին

6

PI - 2
16 AUG 2018
ARMENIA
3103
20 AUG 2018
17 AUG 2018